ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1965 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ա. Ա. Քալանթարյան

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Զրահ, սաղավարտ, վահան)

Հայաստանի վաղ միջնադարյան (5—8-րդ դդ.) զենքի և սպառազինության վերաբերյալ առանձին ուսումնասիրություն չի կատարված։ Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերին նվիրված աշխատություններում[1] այդ հարցերը լուծվում են միակողմանիորեն, իսկ եզրակացությունները հիմնականում արվում են մատենագրական տվյալների հիման վրա։ Վերջին տարիների պեղումների ժամանակ ի հայտ եկած նյութերը հնարավորություն ստեղծեցին որոշ ընդհանրացումներ կատարել զուտ հնագիտական տեսանկյունից։ Սակայն պետք է նշել, որ եղած նյութերը շատ սակավաթիվ են և առանց մատենագրական վկայությունների և զուգահեռ նյութի ուսումնասիրության այդ բացը չի կարելի լրացնել։

Զրահներ— *4—8-րդ դդ. հայ մատենագրության մեջ բազմաթիվ վկայություններ կան զրահի օգտագործման մասին։ Զրահավորները հանդես են գալիս որպես զորքի առանձին տեսակ՝ «զրահաւորք», «զրահապատք», «պատենագենք»։ Զրահը լայն տարածում է ունեցել միջնադարյան Հայաստանում և այն կրել են առավելապես ծանր սպառազինված հետևակը և հեծելազորը։*

Դվինի պեղումների ընթացքում զրահ գտնվել է վեց անգամ (բեկորներով), որը կարելի է բաժանել երկու տիպի՝ հյուսածո և թերթիկավոր։

Հյուսածո զրահ գտնվել է 1962 թ. միջնաբերդում՝ պալատական սրահից հյուսիս ընկած պեղավայրում։ Այն իրենից ներկայացնում է օղերից գործած շապիկ, որը հագել են հաստ գործվածքից կարված հագուստի վրայից։ Զրահը գտնվել է խիստ քայքայված վիճակում և նրա ձևի մասին որոշակի բան ասել չի կարելի։ Հյուսածո զրահները, ելնելով ընդհանուր կոմպլեքսի շերտագրությունից թվագրվում են 6—7-րդ դդ.։ Դա, անշուշտ, չի հակասում այն տեսակետին, որ այդ տիպի զրահներ օգտագործվել են և՛ ավելի վաղ, և՛ ավելի ուշ ժամանակներում։ Դվինի օրինակին շատ նման հյուսածո զրահի առանձին պա-

---

1 Վ. Աբրահամյան, *Միջնադարյան Հայաստանի զենքի տեսակները, Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հատ. 2-րդ, Երևան, 1949, էջ 37—38։ Նույն հեղինակի «Արհեստները Հայաստանում» (4—18-րդ դդ.), Երևան, 1956, էջ 66—70։* Բ. Ն. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., հատ. 1-ին, Երևան, 1958։*

2 *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 202, Մովսես Խորենացի, Գ, լէ։ Յովհ. Ոսկեբերանի Մեկնութիւն Մատթեի, թարգ. Ե դարու, Վենետիկ, 1826, Դ, էջ 66։*

տառիկներ գտնվել են Վրաստանում՝ Ուրբնիսիի պեղումներից, 4—5-րդ դդ. շերտում[3]։

Հետաքրքիր է նշել, որ հյուսածո զրահի մասին հիշատակություններ պահպանվել են մեր մատենագրության մեջ։ «Եւ ինքն վառեալ վերտ պահպանակօք, ուր ոչ գծէին նետք»[4], «Ապա և ի վերուստ իմն հասեալ աւգնութեան՝ պատառի վերտ և ամուր բահլիկ և կուռ զրահին ամրութիւն արքային Քուշանաց ի նիզակէն Սմբատայ»[5], «Զոէհս վերտս»[6]։ Պրոֆ. Բ. Առաքելյանը և Վ. Աբրահամյանը հիմնվելով Մովսես Խորենացու վերոհիշյալ վկայության վրա, «վերտ» բառը համարում են զրահը նշող տերմին[7]։ Սակայն ինչպես բնագրից և լրացուցիչ աղբյուրներից, այնպես էլ Հայկազյան բառարանի մեկնությունից երևում է, որ



Աղյ. I. Թերթիկավոր զրահի նմուշներ գտնված Դվինի պեղումներից (VI—VIII դդ.)։

«վերտ» բառը նշանակում է ոչ թե զրահ, այլ ունի «ոլորեալ», «հիւսեալ», «շարամանեալ», «շղթայագործ» իմաստը[8]։ Հետևաբար կարելի է ենթադրել, որ տեքստում զրահ նշանակում է «պահպանակօք» բառը, որը եղել է հյուսված, շղթայաձև, այսինքն՝ այն, ինչ մենք տեսնում ենք Դվինից հայտնաբերված օրինակում։

Մյուս տիպի զրահները կազմված են թերթիկներից, որոնց վրա երկու կողմերից կան անցքեր թերթիկները իրար միացնելու համար։

Ինչպես հայտնի է վաղ սպառազինության մեջ օգտագործվել են երկու տիպի զրահ։ Մեկը պարզ, երբ թերթիկները կարվում էին հագուստի վրա՝ ստեղծե-

3 Л. А. Чилашвили. Городище Урбниси (на гр. языке), Тбилиси, 1964, նկ. 41, 2—6։

4 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Հարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 230։

5 Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 68։

6 Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ. ի լոյս ածին Գ. Տեր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 19։

7 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 152։ Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում, էջ 84։

8 Նոր Հայկազյան բառարան, «վերտ» բառը։

լով զրահաշապիկ։ Մյուսը բարդ ձևն էր, երբ թերթիկները միացվում էին թելով, առաջացնելով ամբողջական մետաղե շապիկ, որը հագնում էին հաստ գործվածքից պատրաստված հագուստի վրայից։ Ամենայն հավանականությամբ, թերթիկների միացումները կատարվել են նաև փոքրիկ գամերի միջոցով «...եվ լանջապանակ երկաթագամ տախտակօք կրծից...»[9]։

Նկ. 2։

Դվինից գտնված թերթիկավոր զրահի մասերը իրենցից ներկայացնում են բարդ տիպը։ Այդ եզրակացությանը մենք հանգում ենք հետևյալ պատճառներով։ Նախ՝ զրահներից մեկը (2121/235) նմանվում է ուրարտական թեփուկավոր զրահներին։ Դվինի զրահների թեփուկները տարբեր չափերի են և, ըստ երևույթին, դրանցից փոքրերը տեղավորվել են զրահի առավել շարժվող մասերում, որոնք նույնպես նմանվում են ուրարտական թեփուկավոր բարդ զրահի կառուցվածքին։

Դվինից հայտնաբերված թեփուկավոր զրահները իրենց ձևերով բաժանվում են չորս տիպի։

9 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 248։

Առաջին տիպը ուղղանկյուն, ծայրը մի փոքր կլորացված թերթիկներ են, որոնք իրենց ներքին մասերով ծածկում են ստորին թերթիկի վերին մասը և կարերը։ Երկարությունն է 7,5 սմ, լայնությունը՝ 2,5 սմ։

Երկրորդ տիպը կազմված է վերոհիշյալ զրահի նման թերթիկներից՝ տարբերվելով փոքր չափսերով և թերթիկների վերին մասում ունեցած կորությամբ։ Արտաքին ծայրերում կան երկու զույգ անցքեր թերթիկները ամրացնելու համար։ Երկարությունը՝ 5,5 սմ, լայնությունը՝ 1,5 սմ (աղյուսակ 1, 2)։

Երրորդ տիպի թերթիկներն ավելի նեղ են և կենտրոնում ունեն ալիքաձև ելուստ, որն անցնում է ներքին թերթիկի ծայրերի վրա։ Երկարությունն է 7,5 սմ, լայնությունը՝ 1,5 սմ (աղյուսակ 1, 3)։

Չորրորդ տիպը բաղկացած է ուղղանկյուն թերթիկներից, որոնց մի մասի վերին ծայրը կլորացված է և իր ձևով հիշեցնում է ուրարտական թեփուկավոր զրահի թերթիկներին, տարբերվելով նրանցից կենտրոնում կլոր ելուստի և ակոսի առկայությամբ։ Երկարությունն է 8 սմ, լայնությունը՝ 3, 5—4 սմ (աղյուսակ 1, 1)։

Նշված զրահների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասը, անկասկած, օգտագործվել է վաղ միջնադարում և թվագրվում է 6—8-րդ դդ.։ Մեր ենթադրությունը հիմնվում է այն փաստի վրա, որ զրահների մի մասը հայտնաբերվել է Դվինի կենտրոնական թաղամասում՝ Կաթողիկե եկեղեցու մոտ, 6—7-րդ դդ. շերտից (3-րդ տիպ. 1543/471)։ Մյուսը՝ 2-րդ տիպը հայտնաբերվել է միջնաբերդում և վերաբերում է նույն ժամանակաշրջանին (2237/21). դրա հետ մեկտեղ հայտնաբերվել է եռանիստ նետասլաք, որի թվագրումը Անդրկովկասում, Պարսկաստանում, Միջին Ասիայում և Հյուսիսային Կովկասում չի անցնում 8-րդ դարից։ Ինչ վերաբերում է առաջին տիպին, ապա նույնանման զրահի թերթիկներ հայտնի են Փյանջիքենդի (Միջին Ասիա) քաղաքային մասի պեղումներից[10], որտեղ նրա հետ նույնպես գտնվել է եռանիստ նետասլաք, որով և այլ նյութերի հիման վրա թվագրվում է 7—8-րդ դդ.։ Կարելի է ենթադրել, որ հիշյալ զրահն էլ վերաբերում է նշված ժամանակաշրջանին։ Չորրորդ տիպը, որը, ինչպես նշեցինք, նման էր ուրարտական և հին արևելյան ձևերին, հայտնաբերվել է 9—12-րդ դդ. թվագրվող իրերի և առարկաների հետ։

Հայ մատենագրության մեջ զրահի վերաբերյալ հետաքրքիր վկայություններ են պահպանվել։ Պատկերավոր է Մանվելի զրահի նկարագրությունը. «յամրակուռ յերկաթապատ յոտիցն մինչև ցգլուխն առ հասարակ յանվթար զինէն»[11]։ Այս առումով ուշագրավ է Աղթամարի եկեղեցու վրա քանդակված Գողիաթի հանդերձանքի նկարագրությունը[12]։ Այստեղ մենք նկատում ենք վերտ և թերթիկավոր զրահների միահյուսում, ընդ որում հյուսածո զրահով պատված են մարմնի վերին՝ շարժուն մասերը, իսկ թերթիկավոր զրահը իջնում է մինչև ազդրերը։ Զրահով պատված են եղել նաև մարմնի առանձին մասերը. «...և տախտակս պղնձին թիկանց և լանջանց և պահպանակս բարձից և բազ-

---

10 А. М. Беленицкий, Раскопки здания № 1 на шахристане Пянджикента (1947), Труды Согдийско-Таджикской археологической экспедиции, МИА, № 15, табл. 51, 5.

11 Բիւզանդ, էջ 362։

12 Պատմութիւն հին հայ տարազին, յօրինեաց Հ. Վարդան, Վ. Հացունի, Վենետիկ, Ս. Ղազար, 1923, նկ. 67։

կաց...»[13], «...և ի թիկնապահ և ի լանջապահ պղնձի տախտակացն և ի պահ-պանակացն բարձիցն և բազկացն...»[14]։ Պահպանվել են նաև «բարձապանք» և «սոնապանք» ձևերը։

Առանձին դեպքերում պատմիչների մոտ հիշատակություններ կան ձիերի զրահավորման վերաբերյալ։ Մանվելի նկարագրության մեջ, որին մենք հան-դիպում ենք Բուզանդի մոտ, նշվում է նաև ձին իր «յասպազէն վառելոյն»[15]։ Տրդատը Եփրատի ափերին կռվելու ժամանակ ուներ իր «զառնազենն և ձի՝ զաս-պազենն»[16]։

Այսպիսով, հնագիտական և մատենագրական նյութերը ցույց են տալիս, որ նման զրահներ կարող էին օգտագործվել ինչպես վաղ միջնադարում, այնպես էլ ավելի ուշ, քանի որ նրանց կառուցվածքի մեջ մեծ տարբերություն չկա։

Սաղավարտ և վահան— Պաշտպանական զենքի տեսակներից են նաև սա-ղավարտը և վահանը։ Միջնադարյան հնավայրերի պեղումների ժամանակ այդ-պիսիք չեն հայտնաբերվել[17], սակայն մատենագրության մեջ բազմաթիվ հիշա-տակություններ են պահպանվել նրանց մասին։

Սաղավարտը, որ օգտագործվել է ծանր հեծելազորում և հետևակում, պաշտպանել է զինվորի գլուխը հարվածներից։ Տեղին է նշել, որ հայկական բա-նակում բացի ծանր զենքով սպառազինված զորքից, եղել են նաև այսպես կոչ-ված՝ «մերկեր»[18], որոնք չեն կրել պաշտպանական նշանակություն ունեցող զեն-քի և ոչ մի տեսակ։ Մեզ թվում է, որ «մերկերը» կարող էին զինված լինել միայն նետ ու աղեղով և պարսատիկով հեռավոր տարածության վրա մարտ մղելու հա-մար։

Սաղավարտը Բուզանդի, Խորենացու և Եղիշեի մոտ, ինչպես նաև ավելի ուշ շրջանի մատենագրության մեջ կոչվել է «գլխանոց երկաթի»[19] «Սաղա-վարտ» ձևը հանդես է գալիս նաև Եղիշեի մոտ[20], Բյուրեղը Հերակլ թագավո-րին ընծայում է «սաղաւարտս հազար»[21]։

Սեբեոսը խոսելով Պարթևական Արշակ թագավորի որդի կրտսեր Արշակի թագավորության մասին, նշում է, որ «մատուցանէ (Բագարատն՝ թագադիր ասպետ—Ա. Ք.) նմա պատարագ ոսկի և արծաթ և զարդարէ զնի ի սնդր և ի վա-կաս»[22]։ Բազմաթիվ կարծիքներ են եղել «սնդր» բառի վերաբերյալ։ Ք. Պատ-կանյանը գտնում է, որ «սնդրը» որևէ արքայական զարդ է։ Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» այն համարում է «անստույգ և, իհարկե, խան-գարված բառ»։ «Սնդր» բառի ճիշտ ստուգաբանությունը, մեր կարծիքով, տվել է Ն. Մառը, որը այն համարում է փոխադրություն ասորական snoura սաղա-

---

13 Մովսես Խորենացի, էջ 35։

14 Դրասխանակերտցի, էջ 312։

15 Բուզանդ, նույն տեղում։

16 Ագաթանգեղեայ Պատմութիւն, Վենետիկ, 1862, էջ 158։

17 1964 թ. Ամբերդի մասնակի պեղումների ժամանակ գտնվել են պղնձե թիթեղիկների առանձին մասեր, որոնք, պեղումների ղեկավար Ս. Հարությունյանի կարծիքով, սաղավարտի բեկորներ են. նույն տեղից գտնվել են նաև վահանի կաշվե մասերը ամրացնող գամեր։ Նյութերը հրապարակված չեն և գտնվում են Հայաստանի պետական պատմական թանգարանում։

18 Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 96։

19 Խորենացի, էջ 35, Դրասխանակերտցի, էջ 303։

20 Եղիշէ, էջ 58։

21 Շապուհ Բագրատունի, էջ 10։

22 Սեբէոս, էջ 9։

վարտ բառից[23]։ Վակաս էին կոչում սաղավարտից ուսերի վրա կախվող մառեալ փակէին»[9]։ Մարտ վարելու այս տեխնիկան պահպանվել էր 9—10-րդ դդ.։ «Հրամայէր հետեակամարտ գնդին վահանափակ լինել, որ տեսութիւն հարվածներից։

Նախարարները և իշխանները կրել են սաղավարտներ, որոնց վրա քանդակված են եղել տարբեր պատկերներ, գուցե և իրենց տոհմի զինանշանը[25]։ «Եւ ինքն գլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորոք վերջիւք»[26]։ Կաղանկատվացու մոտ մենք հանդիպում ենք «վագրակերպ սաղաւարտ» ձևին[27]։ Հետաքրքիր է նշել, որ վրաց թագավոր Վախտանգ Գորգասալը կրում էր գայլակերպ սաղավարտ։ Բուզանդը նշում է, որ Մերուժան Արծրունին իր սաղավարտի վրա նշան չուներ՝ անճանաչելի լինելու և իր զինվորներից չտարբերվելու համար[28]։

Վահանը օգտագործվել է առանձին զինախմբերի կողմից (նիզակավորներ, սուսերավորներ, վաղրավորներ) և՛ հեծելազորում, և՛ հետևակում։ Ըստ երևույթին, հետևակի և հեծելազորի վահանները միմյանցից տարբերվում էին չափսերով, հետևակը կրում էր ավելի մեծ վահան, իսկ հեծելազորը՝ փոքր, որ պարզ երևում է նրանց կիրառման հնարավորությունից։ Գործածության մեջ են եղել նաև շատ մեծ վահաններ, որոնց միջոցով հետևակը պատրաստվել է մարտի ընթացքում՝ հանգստանալու ժամանակ, և ապա նորից շարունակել իր կռիվը։ «Յորժամ տարածանէին ինչ զօրքն Պարսից զզօրս Յունաց և կամ զգունդ նիզակաւորացն հայոց, ի լեգէոն վահանաւորացն Յունաց կամ ի սպարակիրն հայոց իբրև ի բերդ մտեալ հանգչէին», «Եւ յորժամ դարձալ սակաւիկ մի ինչ յաղթահարէին զնոսա զօրքն Պարսից, և նոքա իբրև ի բերդ ամուր դիմէին ի լեգէոն ի զօրսն վահանաւորս, և նոցա բացեալ զվահանսն՝ զնոսա ի մէջ առեալ փակէին»[29]։ Մարտ վարելու այս տեխնիկան պահպանվել էր 9—10-րդ դդ.։ «Հրամայէր հետեակամարտ գնդին վահանափակ լինել, որ տեսութիւն իմն բերէր յինքն որպեսզ անպարտելի պարիսպ»[30]։

Վահանները պատրաստվում էին մետաղից, կաշվից, փայտից. «յիսնանիւթից»[31], նրանք կենտրոնում ունեին կոնաձև ելուստ՝ «ոսկեկմբեայ վահանօք»[32]։

Զենքի և զինագործության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վաղ միջնադարյան Հայաստանում այն գտնվում էր զարգացման բարձր աստիճանի վրա և շարունակում էր նախորդ շրջաններից եկող տրադիցիաները։ Զենքի և սպառազինության մի մասը, ամենայն հավանականությամբ, որոշ փոփոխություններով հանդես է գալիս ուսումնասիրվող ժամանակաշրջանում և իր հետագա զարգացումն է ապրում 9—13-րդ դարերում։

---

23 Н. Я. Марр, Арабское извлечение из истории Сирийской хроники Марибаса, СПб., 1902, էջ 88.

24 Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ դդ., Երևան, 1949, էջ 12, ձախ սյունակի ծանոթ. 3։

25 Ամբերդում գտնված սաղավարտի բեկորներից մեկի վրա դրոշմելու եղանակով պատկերված է առյուծ։

26 Խորենացի, էջ 35։

27 Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 123։

28 Բուզանդ, էջ 379։

29 Բուզանդ, էջ 301—302։

30 Դրասխանակերտցի, էջ 312։

31 Կաղանկատվացի, էջ 123։

32 Նույն տեղում, էջ 29։

А. А. Калантарян

ЗАЩИТНОЕ СНАРЯЖЕНИЕ РАННЕ-СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Резюме

В комплексах археологических предметов ранне-средневекового периода, обнаруженных в результате раскопок Двина, наблюдается небольшое количество защитных снаряжений.

Основные виды их представлены разными типами железных панцирных пластинок, которые делятся на четыре вида: 1) прямоугольные с округленным концом; 2) пластинки, отличающиеся меньшим размером и выемчатым краем; 3) более узкие с волнистым выступом в центре и 4) пластины с круглым и длинным выступами в центре.

Во время раскопок был найден также панцирь, образованный из небольших железных колец. Щиты и шлемы не были обнаружены, но имеется ряд изображений на монументальных памятниках Армении, а также данные письменных источников, которые позволяют представить их формы. Они вместе с орнаментацией Ахтамарского храма, хотя и относятся к X в., мало отличаются, на наш взгляд ,от оружия, применявшегося в VIII—IX вв.

Датировка панцирей определяется комплексом сопровождающих предметов (керамики, наконечников стрел и архитектурных сооружений, а также аналогиями сопредельных стран), относящихся к VII—VIII вв.